

**ԼՈՌՈՒ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Պետրոսյան Լիլիթ

Վանաձորի պետական համալսարան

lilitpetrosyano1977@mail.ru

Գևորգյան Նանե

Վանաձորի պետական համալսարան

gevorgyanane@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-08-0-164

Բանալի բառեր. խոսվածք, առանձնահատկություն, ստուգաբանություն, լեզենդ, ոչ պահպանողական բնակչություն:

Որպես գուգադրական քննության եզրեր ընտրել ենք Լոռու հեքիաթները և վիմագրությունները՝ ցույց տալու համար, թե բանավորից գրավոր խոսքի անցումը հնչյունական ու կիրառական ինչ առանձնահատկություններ ունի, և թե ինչ հարաբերությամբ են համադրվել հեքիաթն ու իրականությունը: Ընդ որում հեքիաթները՝ բանավոր-բանահյուսական առաջին հայերեն աղբյուրները, գրի են առնվել 20-րդ դարում, իսկ հայկական վիմագրությունները՝ բնականաբար 5-րդ դարին հաջորդող ժամանակներում:

Թե հայ, թե արտասահմանյան գրականության մեջ հեքիաթանունների հետ կապված կա հետևյալ սահմանումը՝ «Հեքիաթանունները խոսքի միավորներ են, որոնք, տարածվելով և լայն գործածականություն ստանալով, անցնում են լեզվական մակարդակ»¹: Մեր խնդիրն է հենց պարզել, թե որքանով է այս սահմանումը համապատասխանում Լոռու տարածաշրջանի իրականությանը:

¹ Մանթոյան Ա., Պետրոսյան Լ., *Անձնանունները Մշո բարբառով գրաված հեքիաթներում*, Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ, Զեկուցումների ժողովածու, Ե., 2014, էջ 155:

Հատուկ անունների և նրանց նշանակությունների մասին գիտությունը կոչվում է անվանաբանություն (ономастика), որը քննում է հատուկ անունների ծագումը, պատմականորեն կրած ձևափոխումները և փոփոխությունները: «Ժողովրդական հեքիաթների օնոմաստիկան հատուկ կազմակերպված միկրոտեքստ է, որն արտացոլում է ժողովրդի մտածելակերպը, նրա մշակութային, պատմական ու առասպելական արմատները»²: Սույն ուսումնասիրության մեջ զուգահեռելով Լոռու հեքիաթանունները և վիմագիր արձանագրությունները, բացահայտում ենք, թե որքանով է դրանցում բացահայտված տարածաշրջանի մարդկանց մտածելակերպը, և թե ինչ աղբյուրներ ունեն պատմական ու մշակութային ոլորտների հետ:

Դիտարկենք առաջին օրիանկը՝ **Պղնձե քաղաք** (հեքիաթում) և **Պղնձահանք** (վիմագրության մեջ): Վիմագրության մեջ Պղնձահանքի դիմաց նշված է՝ «նախկին Ախթալա», բայց Պատմական փաստերի գիտակներ, մատենագիրներ Կիրակոս Գանձակեցու և Ստեփանոս Օրբելյանի աշխատություններում, ինչպես և ձեռագրի հիշատակություններում այս վայրը ընդերկրյա հարստությունների շնորհիվ վաղուց ի վեր կոչվել է Պղնձահանք, իսկ հոգևոր կենտրոնը՝ Պղնձահանքի վանք, **ավելի ուշ՝ Ախթալա**: Կազմված է թուրքական ծագում ունեցող աղթալա՝ սպիտակ բացատ նշանակող արմատներից³, որտեղ սպիտակ գույնը կապվում է նույն տեղանվան մեկ այլ անունի՝ *Արծաթահանքի* հետ: Ի դեպ, Պղնձահանքի թուրքերեն տարբերակը ևս կա և թուրքական աղբյուրներում բավականակտիվ հիշատակվում է՝ *Գյումուշխանա*: Որքան էլ որ տարբեր հեղինակների կողմից տարբեր ժամանակներում տեղ տրվի

² Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 8, Ե., 1977, էջ 6:

³ Թ.Խ. Հակոբյան, Ստ.Տ. Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան, *Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան*, Ե., 1986, էջ 114:

Պղնձահանք/Պղնձավան/Պղնձա... տեղանվանը, միննույնն է, եթե տեղացին չի կիրառում բառը՝ համարելով այն խորթ, ապա անիմաստ է անվանափոխման հետ տարվող աշխատանքը: Ահա թե ինչ պատասխաններ են տվել ախթալեցիները Հետք մեդիային տված հարցազրույցում⁴ «Պղինձ կա՞», որ քաղաքի անունը ուզում են դնեն Պղնձավան, եղած պղինձն էլ հանձնեցինք էրկաթ հվաքող Մարուսին՝ պրծավ, գնաց», «Ասում են՝ արմատները թուրքական ծագում կա, տո՛ւ թուրքը որդի՞ էր, որ Ախթալեն կար, հազար տարվա պատմություն ունենք»:

Որոշ բանասերներ այլ կերպ են ստուգաբանում տեղանվան բաղադրիչները՝ հավանաբար խուսանավելով ոչ պահպանողական հայ իրականությունից: Սուքիաս Էփրիկյանը, օրինակ, գրում է, թե այս տեղանունը կազմված է *ախտ* և *լի* բաղադրիչներից, իբրև՝ *ախտով լի*:

Փաստորեն, ստացվում է, որ անգամ հեքիաթներում գործածվում է տեղանունը իր նախնական ձևով և նշանակությամբ, որը մինչև վերջերս քննարկման նյութ է, գործածված է նաև վիմագրության մեջ՝ միայն թե համադրական եղանակով, անգամ հնչունական կազմն է նույնը, բայց մինչ օրս գործնական կիրառություն չունի ո՛չ տեղացիների, ո՛չ այլոց կողմից:

Սրան հակառակ, երջանիկ զարմանքով պիտի արձանագրենք, որ մեր հաջորդ օրինակը՝ **Սպիտակ աշխարհք** (հեքիաթում) և **Սպիտակ քաղաք** (վիմագրության մեջ) տեղանվանագույգը պահպանվել է մինչ օրս, չնայած որ Սպիտակ անունը ստացել է նույն սկզբունքով՝ անվանումը կապված է քաղաքի շրջակայքում եղած կրաքարի հանքերի հետ: Բայց՝ Հայաստանի Լոռու մարզի Սպիտակ քաղաքը մինչև 1949 թվականը կոչվել է «Համամլու» կամ «Համամլի»,

⁴ <https://hetq.am/hy/article/45399>, հասանելի է՝ 30.11.2024

⁵ Նույն տեղում:

որը հավանաբար առաջացել է պարսկերեն «համամ» (բաղնիք) բառից, իսկ բաղնիքների առկայության մասին են վկայում (նախկին շաքարի գործարանի տեղում նախկին Դեմի կոչված հանդամասում) հայտնաբերված կավե մեծ կարասներն ու խողովակները: Եվ այժմ էլ սրան հարակից շրջանների բնակչության մի ստվար զանգված Սպիտակին զուգահեռ օգտագործում է *Համամիու*-ն: Փաստորեն, և՛ հեքիաթում, և՛ վիմագրության մեջ այս քաղաքի անունը մենաբառ չէ, որպիսին այժմ է, իսկ բարբառային *աշխարհք* բառն էլ հենց նշանակում է քաղաք:

Դիտարկենք հաջորդը՝ **Ռոնակ** (հեքիաթում) և **Ռրնակ** (վիմագրության մեջ): Ռ>ր փոխակերպումը բառամիջում հատուկ է Լոռու խոսվածքին, ինչպես՝ արծիվ>առծիվ, արգելել>առքելիլ և այլն: Գյուղի այժմյան անունն է Ակներ, որը ևս վկայված է վիմագրություններում և այժմ էլ մարդկանց զգալի մասը հենց այդ անունով է ճանաչում գյուղը: Ռրոշ հանդեսներում Ակներին կից այս երկու տարբերակներ էլ նշվում են, բայց իզուր. այստեղ գրական նախահիմք միայն **Ռրնակ**-ն ունի: Ավանդությունը կապվում է ր-ով գրության տարբերակի հետ՝ Դսևանքի ջուրը մատակարարվել է Ռրնակա աղբյուրից՝ գետնի տակով անցկացված ջրուղով: Դարեր առաջ Կայան բերդը պաշարվում է կովկասյան ցեղերի, մասնավորապես՝ լեզգիների կողմից: Բերդում պաշարված հայերը դիմադրություն են ցույց տվել՝ հնարավորություն չտալով թշնամուն գրավել այն: Այդ ժամանակ հակառակորդն ամրոցի մոտակա գյուղի մի ծեր կնոջից իմանում է, թե որ աղբյուրից է ջուր հասնում ամրոց: Այստեղից էլ գյուղի անունը մնում է Ռրնակ (Ռ՞րն ա ակը): Լեզգիները ջրի աղբյուրը փակում են, և մի քանի օր հետո բերդում պատսպարված ժողովուրդը անձնատուր է լինում: Հետաքրքիր է,

⁶ Արամ Ղանալանյան, *Ավանդապատում*, Ե., 1969, էջ 182:

որ տեղանունների բառարանում Ոռնակը կապակցվել է տափ գոյականին, որը ավելի բարբառային է, քան դաշտը, որը օգտագործվել է Որնակ-ի հետ՝ Ոռնակա տափ և Որնակա դաշտ: Սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ Ոռնակը խոսվածքային տարբերակ է:

Տեղանունների զուգադրական քննության տեանկյունից առանձնահատուկ են նաև Լոռու խոսվածքին ոչ բնորոշ գրության տարբերություններ ունեցող տեղանվանագույզերը: Դիտարկենք առաջին օրինակը՝ **Հախսպատ** (հեքիաթում) > **Հաղբաղ** (վիմագրության մեջ): Մերօրյա ընդունված տարբերակը «Հաղպատ»-ն է. կարելի է կարծել, թե ներկայիս գրության ձևը երկու տարբերակների ընդհանրացյալն է: Նկատի ունենանք նաև, որ Հաղբաղ ձևը հին է և այդ հնչյունակազմով բնորոշ էլ չէ Լոռու խոսվածքի արտասանությանը (արտասանվում է՝ Հախսպատ): Բացի դրանից, վանքի մասին լեզենդը կապվում է «պատ» բառի հետ. «...նա ոտքը դնում է վանքի պատերից մեկին և ասում. «Հա՛խ պատ է», որը նշանակում էր «իսկական, ամուր պատ է»⁷, իսկ լոռեցիները պատ բառը արտասանում են, ինչպես որ կա:

Գրության հաջորդ տարբերությունը նկատում ենք հետևյալում՝ **Գյառ-գյառ** (հեքիաթում) և **Գյառգյառ** (վիմագրության մեջ): Գրության նախաստիպը՝ «Կարկառ», որտեղ կ>գ (քմային) անցում է տեղի ունեցել, մի բան, որ բնորոշ չէ Լոռու խոսվածքին, բայց տեղ է գտել և՛ հեքիաթում, և՛ վիմագրության մեջ գրեթե նույնությամբ:

Այժմ անդրադառնանք անձնանունների մի զույգի, որի քննությունը երկբևեռ է, թվում է, թե որոշակիացված չէ ստուգաբանությունը, բայց երբ կարդում ենք հեքիաթը, պատկերը լիովին պարզվում է: Խոսքը **Շահաբազ** և **Շահ Աբաս** անձնանունների մասին է:

⁷ Նույն տեղում, էջ 241:

Շահաբազ-ի հիմքում պարսկական շահ՝ իշխանություն նշանակող և պարսկական բազ՝ հակվել նշանակող արմատներն են, այսինքն՝ իշխանության հակվող, իշխանատենչ։ Իսկ ի՞նչ, եթե այստեղ պարսկական բազ-ը նշանակի նաև բազե, որը Պարսկաստանում եղել է իշխանական թոչուն, իսկ հեքիաթի մեջ էլ Շահաբազը պիտի կռվի ու հաղթի բազեին, որ դառնա թագավոր։ Այս ստուգաբանությանը միակ արգելող փաստն այն է, որ հենց նույն հեքիաթում հանդիպում է մեկ այլ բառ՝ բազ բաղադրիչով՝ սելթրբազ, որ նշանակում է կախարդության հակվող, հմայող։ Իսկ Շահ Աբասի՝ Լոռու հետ ունեցած պատմական աղերսների մասին տեղեկանում ենք Առաքել Դվրիժեցու պատմությունից ու նաև Վրաց աղբյուրներից։ Մեջբերենք մի հատված միայն՝ «Վրաց արքաները մշտապես հավակնում էին Լոռուն և շրջակա տարածքներին, որոնք նույնպես անցել էին օսմանցիներին։ Օգտվելով նպաստավոր պայմաններից՝ Քարթլիի թագավոր Գեորգին 1601 թ. գրավում է Լոռին։ Երբ շահ Աբասը պաշարում է Երևանի բերդը, նրան են ներկայանում Գեորգին ու Կախեթի թագավոր Ալեքսանդրը, որոնք իրենց զորքերով մասնակցում են Երևանի պաշարմանը։ Այնուհետև, երբ արդեն բերդը գրավված էր, «շահ Աբասը Գեորգ թագավորից խնդրեց Լոռին և Լոռու բերդը։ Եվ Գեորգին զիջեց այն, քանի որ չէր կարող մերժել շահ Աբասին։ Եվ Լոռու բերդը գրավեց շահ Աբասը, որն և մտցրեց այնտեղ իր զորքը. ապա տուն վերադարձավ»։ Այսպիսով շահ Աբասը տիրում է նաև Լոռու բերդին։ Շահաբազ բառը ինչպես էլ որ ստուգաբանվի, միննույնն է, վստահորեն այն Շահ Աբասի՝ որպես պատմական իրական կերպարի երևակումն է հեքիաթում, որտեղ պարզ խուլ բաղաձայնը վերածվել է ձայնեղի՝ այդպիսով իսկ

՝ Մելիքսեթ-Բեկ Լ., *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, հ. Բ, Ե., 1936, էջ 139։

պարսկերեն իմաստով բնորոշիչ ու առանձնահատուկ հատկանիշներ վերագրելով այդ պատմական անձին:

Չոռ Մուստաֆա (հեքիաթում) և **Չորան** (վիմագրության մեջ): Երկուսի հիմքում էլ «գոր»՝ «ուժ, զորություն» նշանակող իրանական արմատն է, բայց հեքիաթում կիրառվելով արմատական տարբերակով՝ հանդես է եկել իբրև մականուն՝ Լոռու խոսվածքին հատուկ $p > n$ հերթագայությամբ, իսկ վիմագրության մեջ բառակազմական կաղապարին դժվար է հստակորեն բանաձևային արտահայտություն տալ. Հր. Աճառյանը իր «Հայոց անձնանունների բառարանում» գրում է, թե Ջաւրան ձևը Ջօրա(յ)-ի որոշյալ հոդով կիրառությունն է, իսկ Ջօրա-ն Ջաւրվար (Ջօրավար) բառի կրճատ ձևն է, բայց հնարավոր է, որ թյուրք-արաբական նմանօրինակ այլ փոխառյալ բառերի (Ասլան, Ղափլան...) համաբանությամբ է բաղադրվել Չորան անձնանունը՝ առավել ևս, որ այն վիմագրության մեջ ուղիղ ձևով է կիրառվել՝ «ԵՄ՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ՝....ԻՄ ԱՂԲԵՐԱՑՍ, ԱՍԼԱՆԱՅ ԵԻ ԶՈՐԱՆԱՅ»: Այսպիսով՝ Չորան անձնանվան հիմքում, կարծում ենք, «Չոր կամ գոր + ան» կաղապարն է, որտեղ, սակայն, ան-ը ոչ ածանց է, ոչ փաղաքշական մասնիկ, ինչպես, օրինակ, Չորիկ տարբերակի -իկ-ը, ոչ այլ բան. այն համաբանության եղանակով հիմնական արմատին բաղադրված, ոչ մի իմաստ չարտահայտող վերջավորություն է: Ներկայումս «գոր կամ գոր» արմատով կիրառվում է Չորիկ անձնանունը և Չորյան ազգանունը:

Եսայի կամ Իսայի (հեքիաթում) և **Եսայի կամ Յիսէ** (վիմագրության մեջ): Եսայի անունը առաջացել է եբրայերեն «is»՝ *փրկել* արմատից և նշանակում է «փրկություն», իսկ Իսայի բառի հիմքում, ինչպես հայտնի է, Հիսուս բառն է, Ղուրանում՝ «Իսա», ասել է թե՛

⁹ Դիվան հայ վիմագրության, Պր. 9, Ե., 2012, էջ 293:

դարձյալ նույն արմատից է: Եթե արմատի սկզբնաձևը ի-ով տարբերակն է, նշանակում է, որ տեղի է ունեցել ի>ե հերթագայություն, բայց չնայած դրան՝ երկու տարբերակներն էլ կիրառվում են թե՛ Լոռիում, թե՛ դրանից դուրս: Նկատենք, որ Լոռու հեքիաթներում անձնանունների հնչյունափոխությունները երբեմն կատարվում են հատուկ նպատակադրումով: Իսային ռանչպար էր, իսկ Եսային՝ սատանա: Ստացվում է, որ Եսայի անունը իր բուն նշանակությամբ հանդես չի եկել, այլ որպես Իսայի անվան նմանողությամբ հակադրանք: Պետք է հավաստենք նաև, որ վիմագրության «Եսայի» տարբերակը ուղիղ ձևը չէ, այլ թեք՝ «ՅԻՇԵԱ ՏՐ ԶՀՈԳԻՍ ՀԱՆԳՈՒՅՅԵԱԼ ՄԱՆԱՆԻԱՅԻ ԵՐԶՆԿԵԱՆՑ ԵԻ ՎԵՅ ՈՐԴՈՅՆ՝ ԼԻԶԱՅԻ, ԱԼԵՔՍԱՆԴՐԻ, ՇՈՒՇԱՆԻԿԻ, ԳԱՐԵԳԻՆԻ, ԿԱՏԱՐԻՆԵԻ, ԵՍԱՅԻ»¹⁰, բայց ուղիղ է «Յիսէ» ձևը՝ «ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ՅԻՍԷԻ»¹¹: «Եսայի» և «Յիսէ» անունների երկրորդ հիշատակություն չկա Լոռու վիմագրություններում, ուստի մնացել է եզրակացնել, որ «is» արմատից բաղադրված ցանկացած անձնանուն Լոռու տարածաշրջանում (կարելի է ասել՝ և ոչ միայն) միօրինակ ձևով հանդես չի եկել՝ առաջացնելով ստուգաբանական խառնաշփոթ պատկեր, և դրա պատճառը երևի թե այն է, որ ինչպես Հր. Աճառյանն է գրում՝ «Քրիստոնյաների մեջ կարելի չէր որևէ մարդու անուն դնել Իսա (Յիսուս), բայց մահմեդականների մեջ կարելի էր՝ Իսաբէկ, Իսադար, Իսաբաշխ¹²,...»: Այնուամենայնիվ, ներկայումս անձնանուններից թեև սակավ, բայց կիրառվում են Եսայի, Իսայի տարբերակները, ազգանուններից՝ Եսայան, Իսայան տարբերակները:

¹⁰ Նույն տեղում, էջ 209:

¹¹ Նույն տեղում, էջ 242:

¹² Ինչպես նկատելի է, բոլորն էլ «իս» ձևից են բաղադրված՝ ի տարբերություն հայոց մեջ առկա նույնարմատ անձնանունների:

Խաչո (հեքիաթում) և **Խաչատուր-Խեչատուր-Խեչի-Խաչիկ** (վիմագրության մեջ): Հայկական ծագման արմատ ունի՝ խաչ: Հեքիաթում բառը արտակարգ հնչյունափոխության է ենթարկվել՝ ովերջնավանկային ձայնավորով, իսկ վիմագրություններում մերթկիրառվել է ամբողջապես՝ երբեմն ա>է հերթագայությամբ, մերթնան արտակարգ հնչյունափոխության ենթարկվելով՝ ի վերջնավանկային ձայնավորով, մերթ փաղաքշական -իկ մասնիկի համակցությամբ: Այստեղ բուն Լոռու խոսվածքին հատուկ են միայն ա>է հերթագայություններով անվանումները (միջնակ>միջնեկ, արծաթ>երծաթ, խաչ>խեչ...): Ներկայումս էլ խաչ>խեչ արմատով բաղադրված ազգանունները բավականին մեծ գործածականություն ունեն Խաչատրյան, Խաչատուրյան, Խաչիկյան, Խեչիկյան, Խեչյան, Խեչումյան, Խեչոյան ու էլի մի քանիսը:

Սիմոն (հեքիաթում) և **Սիմոն-Սիմեօն-Սիմեո-Սիմեոն-Սիմեոն-Սիմեան-Շմաւոն** (վիմագրություններում): Սիմոն բառն ունի աստուածաշնչային ծագում՝ եբրայերեն שִׁמְעוֹן բառից, որ նշանակում է՝ «լսող»¹³: Հայերի մեջ կա Շմավոն անունը, որը շատ սակավ կիրառություն ունի: Նույն պատկերն էլ ազգանունների մեջ է՝ Սիմոնյան, որն ունի մեծ գործածականություն, և Շմավոնյան, որը չունի մեծ գործածականություն:

Ուսեփ (հեքիաթում) և **Հովսեփ** (վիմագրության մեջ): Նախատիպը Յովսեփ ձևն է, որն ունի դարձյալ եբրայական ծագում¹⁴: Ուսեփ տարբերակը Լոռու խոսվածքում առաջացել է հ-յ հնչյունի անկումով և առաջնավանկի ձայնավորների՝ օ>ու հերթագայությամբ: Ազգանունների մեջ, պարզ է, Հովսեփյանը գերակշռող է, իսկ Ուսեփ տարբերակից ունենք սակավ գործածելի Ուսեպյան տարբերակը:

¹³ **Հրաչյա Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, Ե., 1948, էջ 167:

¹⁴ Նույն տեղում, էջ 709:

Արշագ (հեքիաթում) և **Արշակունիներ** (վիմագրության մեջ): Վերը նշված՝ Հախպատ>Հաղբադ գույզի օրինակով այստեղ ևս պիտի արձանագրենք Լոռու խոսվածքին ոչ հատուկ բաղաձայնական կիրառության մասին. գ>կ անցումը վերջին փակ վանկում ընդհանրապես բնորոշ չէ Լոռու խոսվածքին, բայց, փաստորեն, հեքիաթում տեղ է գտել: Վերը հիշատակած Որնակ>Ոռնակ տեղանվան օրինակով, այստեղ ևս պիտի լիներ Առշակ, բայց ո՛չ վիմագրությունը, ո՛չ էլ հեքիաթը չեն արտացոլում խոսվածքային այս առանձնահատկությունը:

Այսպիսով՝ Լոռու տարածաշրջանի հեքիաթներում և վիմագրություններում հատկանունների գուգադրական քննությունից պարզ դարձավ, որ տարածված սահմանումը, թե հեքիաթանունները տարածվելով և լայն գործածականություն ստանալով անցնում են լեզվական մակարդակ, մասամբ է համապատասխանում Լոռու տարածաշրջանի իրականությանը, քանի որ Լոռու բնակչությունը, ինչպես Հայաստանի այլ տարածաշրջանների բնակչությունը, նույնպես իր բառապաշարից մինչ օրս չի հանել փոխառյալ բառերը և դրանք փոխարինել վաղուց գոյություն ունեցող համարժեքներով, ինչը ոչ միայն կարևորվում է ազգային պահպանման տեսանկյունից, այլև քաղաքական նկատառումներից ելնելով: Համեմատվող որոշ գույգերում նկատելի էր, որ հատկանունները, անհասկանալիորեն, Լոռու խոսվածքին ոչ բնորոշ հնչյունակապություններով են կիրառվել, իսկ արտասանական իրական պատկերը շատ անգամ երևում է տվյալ հատկանվան մասին պատմող հին լեզենդից:

Petrosyan Lilit, Gevorgyan Nane - Comparative Analysis of Common Proper Names in Fairy Tales and Lithographs of the Lori Region.-
A comparative analysis of proper names in fairy tales and lithographs of the Lori region showed that the widespread definition, that fairy tale

names, by spreading and gaining widespread use, pass to the linguistic level, only partially corresponds to the reality of the Lori region. And the reason for this is that the population of Lori, like the population of other regions of Armenia, has not yet removed borrowed words from their vocabulary and replaced them with long-existing equivalents, which is important not only from the point of view of preserving the national identity, but also for political reasons. In some of the compared pairs, it was noticeable, that proper names, for inexplicable reasons, were used with sound combinations not characteristic of Loric speech, and the real picture of pronunciation can be traced many times in the ancient legend telling about that proper name.

Keywords: dialect, specificity, etymology, legend, non-conservative population.

Петросян Лилит, Геворгян Нане -Сравнительный анализ общих собственных имен в сказках и литографиях лорийского региона.- Из сравнительного изучения имен собственных в сказках и литографиях Лорийского региона стало ясно, что общепринятое определение, согласно которому сказочные имена, распространяясь и получая широкое употребление, переходят на языковой уровень, лишь частично соответствует реальности Лорийского региона. И причина этого в том, что население Лори, как и население других регионов Армении, до сих пор не исключило заимствованные слова из своего словарного запаса и не заменило их давно существующими эквивалентами, что важно не только с точки зрения национального сохранения, но и по политическим соображениям. В некоторых из сравниваемых пар было заметно, что имена собственные по необъяснимым причинам употреблялись со звуко сочетаниями, не

характерными для лорийской речи, а реальную картину произношения можно многократно проследить в древней легенде, повествующей об этом имени собственном.

Ключевые слова: говор, особенность, этимология, легенда, неконсервативное население.